ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«11» հոկտեմբեր 2025թ. Ն ՄՈ/ 684 -Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՆԱԿԱՆՈՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալի 2025 թվականի հուլիսի 4-ի ՈԵ/01/2060-25 գրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Այգեվանի Մ. Խորենացու անվան միջնակարգ դպրոց», «Նորապատի միջնակարգ դպրոց», «Ծիածանի միջնակարգ դպրոց», «Քարակերտի թիվ 2 միջնակարգ դպրոց», «Ալաշկերտի Հ. Քոչարի անվան միջնակարգ դպրոց», «Արմավիրի Վ. Բախշյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց», «Մեծամորի միջնակարգ դպրոց», «Նորավանի միջնակարգ դպրոց» և «Խանջյանի Ա. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների հանրակրթական ծրագրերի բնականոն ուսուցման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

1. Մինչև Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Այգեվանի Մ. Խորենացու անվան միջնակարգ դպրոց», «Նորապատի միջնակարգ դպրոց», «Ծիածանի միջնակարգ դպրոց», «Քարակերտի թիվ 2 միջնակարգ դպրոց», «Ալաշկերտի Հ. Քոչարի անվան միջնակարգ դպրոց», «Արմավիրի Վ. Բախշյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց», «Մեծամորի միջնակարգ դպրոց», «Նորավանի միջնակարգ դպրոց» և «Խանջյանի Ա. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների դպրոցական շենքերի հիմնանորոգման աշխատանքների ավարտը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Այգեվանի Մ. Խորենացու անվան միջնակարգ դպրոց», «Նորապատի միջնակարգ դպրոց», «Ծիածանի միջնակարգ դպրոց», «Քարակերտի թիվ 2 միջնակարգ դպրոց», «Ալաշկերտի Հ. Քոչարի անվան միջնակարգ դպրոց», «Արմավիրի Վ. Բախշյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց», «Մեծամորի միջնակարգ դպրոց», «Նորավանի միջնակարգ դպրոց» և «Խանջյանի Ա. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների հանրակրթական ծրագրերի բնականոն ուսուցման աշխատանքների կազմակերպումն իրականացնել մարզում գտնվող մի շարք դպրոցներում՝ համաձայն NN1-9 հավելվածների:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը, *քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությանը* և ֆինանսական վարչությանը (վարչությունների պետեր՝ Ս. Բուդաղյան, Դ.Ավետիսյան և Ա.Հակոբյան)՝ ապահովել սույն որոշման պահանջների կատարումը:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը (պետ՝ Ս. Բուդաղյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել սույն որոշման 1-ին կետում նշված պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմիններին և նույն պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահներին (համաձայնությամբ):
4. Սույն որոշման 1-ին կետում նշված շահառուներ հանդիսացող այն պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմիններին, որոնք օգտվելու են ուղևորափոխադրման ծառայությունից՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 21-ի N47-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված հավելվածի 21-րդ կետով սահմանված ուղևորափոխադրման ծառայության ձեռք բերումն, որից պետք է պարտադիր կարգով օգտվեն միայն շահառուներ հանդիսացող պետական ոչ առևտրային կազմակերպությունների մանկավարժական աշխատողները և սովորողները՝ համաձայն N10 հավելվածի:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի օգնական՝ Մանվել Մելիքյանին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2025-07-11 14:30:47 GMT+4
Հավաստագրվել է ԷԿԵՆԿ-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am